

ԱՐԵՎԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Տ. ՏԵՂԱԿՈԼԻ ՊԱՏՎԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ԻԲԱՆԻ ՄԱՅՐԱԳՈՅՆՔԻՄ

Ամենայն հայոց հայրապետության Տ.  
Տեղակալի պատվիրակությունը ժամանել է  
իրանի մայրաքաղաք Թեհրան և հանդի-  
պում ունեցել Թեհրանի հայ համայնքի  
հետ:

Պատվիրակությանը ցույց է տրվել  
սրտագին ընդունելութիւն:

Թեհրանում հրատարակվող «Ալիք»  
թերթը նկարագրում է այդ հանդիպումը:

«Ժամանակից առաջ», դրում է թեր-  
թը, «Խուռաներամ մի բազմություն լցրել  
էր Թեհրանի հայ Ալումբի սրահն ու նըր-  
բանցքը»:

«Բանախօսութիւնը բաց արեց Հա-  
մայնական Խորհրդի նախագահը՝ որ Թեհ-  
րանի հայութեան կողմից բարի գալուստի  
իր խօսքն ասաց յարգելի պատվիրակին:  
Նրան հետևեց Թեհրանի Եկեղեցական  
Վարչութեան Նախագահը»:

«Որոտընդուստ ծափերի տակ խօսք ա-  
ռաւ յարգելի նուիրակը աւելի քան մէկ ժամ  
տեւող իր բանախօսութիւնը, տեց անհրա-  
ժեշտ տեղեկութիւններն ու լուսաբանու-  
թիւններն այն բոլոր խնդիրների մասին,  
որոնք կապված են իր առաքելութեան  
հետ»:

«Հաղորդեց Ս. Էջմիածնի և հայրենի-  
քի ջերմ ողջոյնները տարագիր հայու-  
թեան, յոյս յայտնեց, որ իր շրջագայու-  
թեան ընթացքին, Պարսկաստան, Իրաք,  
Սիւրեա, Լիբանան և Եգիպտոս, պիտի կա-  
րողանայ աւելի ևս սերտացնել կապը Մայր  
Աթոռի և Սփիտոքի մէջ, միաժամանակ  
տանել այն նախապատրաստական աշխա-  
տանքը, որ կարեւոր է կաթողիկոսական  
առաջիկայ ընտրութիւնների համար: Պի-

տի աշխատի մօտից ծանօթանալ թեմերի  
ներկայ վիճակին եւ ուսումնասիրել նրանց  
բոլոր կարիքներն ու պահապութիւններն:

«Այսուհետեւ ծանրացաւ հայոց եկեղե-  
ցու պատմական դերի վրայ հայ իրականու-  
թեան մէջ ընդհանրապէս և ժողովրդի աղ-  
գային դիմագծի պահպանման գործում,  
մասնաւորապէս շեշտեց մշակոյթային  
կրթական այն խոչըր աշխատանքը որ ա-  
մենածանը պայմաններում կատարել է նա  
փրկելով հայ ժողովրդին ուժացումից ու  
տուել մէկը միւսից խոշոր ու պայծառ  
գէմքեր—Մեսրոպ Մաշտոց, որի անւան  
հետ կապւած հայ բովանդակ գրականու-  
թեան սկզբնաւորումը, պատմահայր Մովսէս  
Խորենացի, ապա է դարու նշանաւոր գիտ-  
նական մաթեմատիկոս Անանիա Շիրակացի  
և Ալիք, որոնցով ոչ միայն մենք ենք հը-  
պարտանում յաչս յառաջաւոր մարդկու-  
թեան, այլև հարեւան ժողովուրդները»:

«Հայ եկեղեցին միշտ էլ խուսափել է  
քաղաքականութիւնից, երբ այդ հնարիանը  
է եղել: Նա քաղաքականութեամբ զաղակել  
է ակամայ, պաշտպանելու համար իր ժո-  
ղովրդի շահը, նրա մշակոյթը, ազգային  
աւանդութիւններն ու սրբութիւնները ոչ  
միայն իր գրչով, այլեւ կենացնի խօսքով,  
դործով, տալով Ղեւոնդ երէցի պէս փայ-  
լուն ոչչմքերը»:

«Մինչեւ հայ պետականութեան ծնուն-  
դը եկեղեցին իր ուսերի վրայ էր տանում  
այն բոլոր հոգսերը, որ կապւած էին հայ  
ժողովրդի կրօնական, մշակոյթային, կըր-  
թական ու քաղաքական խնդիրների հետ:  
Ս. Հայաստանի կառագարութիւնը նրան  
ազատեց այդ հոգսերից, բաժանեց եկեղե-

ցին պետութիւնից, իր ձեռքն առնելով մի-  
աժամանակ մշակութային, կրթական ամ-  
բողջ գործը Հայաստանում:

«Արտասահմանում դա համարւեց հա-  
լածանք հայոց եկեղեցու դէմ, երկրի ներ-  
սում ևս գտնեցին մարդիկ, հոգեւոր թէ  
աշխարհական, որոնք այս բոլորը բացա-  
տրեցին պետութեան անբարեացակամու-  
թեամբ հանդէա եկեղեցու և մինչեւ իսկ  
փորձեցին զրդուել ժողովուրդը»:

«Սակայն դա ճիշտ չէր, «չ էլ եկեղե-  
ցին էր դէմ այդ կարգադրութիւններին:  
Ընդհակառակը ազատուելով այդ հոգսերից  
նա աւելի եռանդով պիտի նորուէր իր հո-

գևոր կրօնական գործերին, իր թեմերի  
կարիքներին ու պահանջներին:

«Միթէ մեր եկեղեցին կարող էր դէմ  
լինել այն խոչոր մշակութային ու շմարա-  
րական աշխատանքներին, որ տարւում էին  
մեր երկրում, տարրական և միջնակարգ  
դպրոցների տարածուն ցանցին գիւղերում  
թէ քաղաքներում, զիտական, մշակութա-  
յին, բարձր հաստատութիւններին, ամեն  
կարգի գիտական ինստիտուտներին, պետ-  
համալսարանին իր 2000 ուսանողներով  
ու բազմաթիւ պրոֆեսսորներով, հայկա-  
կան ակադեմիային և այն խոչոր աշխա-  
տանքներին առհասարակ որ բեղմնաւորում  
ու ծաղկում են Հայաստանում»: («Ալիք»,  
թիւ 98, 1944):

